ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N 1
N ՇՀԾՁԲ-7/7-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան **27.09.2014թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Աբելյան ԴՁ» ԲԲԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Մ. Պապոյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Կատարող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 15.04.2014թ. կնքված N ՇՀԾՁԲ-7/7-1 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.2 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

1. Փոփոխության առարկան

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերում կատարել փոփոխություն և կարի ծառայության արդյունքում 2014թ. **սեպտեմբեր և հոկտեմբեր** ամիսներին մատակարարման ենթակա ***2000*** լրակազմ «Կոստյում՝ բամբակյա, կեպիով» ապրանքատեսակի քանակներից ***500*** լրակազմի մատակարարումը թողնել **հոկտեմբեր** ամսին, ***200*** լրակազմի մատակարարումը նախատեսել **նոյեմբեր** ամսին, իսկ մնացած ***1300*** լրակազմը՝ **դեկտեմբեր** ամսին, բայց ոչ ուշ, քան 20.12.2014թ: Վճարումը կիրականցվի վերը նշված համապատասխան ամիսներին՝ աճողական կարգով, բայց ոչ ուշ, քան 25.12.2014թ:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ծառայության հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Աբելյան ԴՁ» ԲԲԸ
ք. Երևան Բագրևանդի 5	Լոռու մարզ, գ. Շիրակամուտ
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ Սպիտակ մ/ճ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1510021930930100
ՀՎՀՀ 00[illegible]	ՀՎՀՀ 06801252
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-ՆՏԱ դեպարտամենտի պետ	տնօրեն
Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ	Մ. ՊԱՊՈՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/13–ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/7» ծածկագրով ՇՀ ընթացակարգի արդյունքում 2014թ-ի ապրիլի 15-ին կնքված N ՇՀԾՁԲ-7/7-1 ծածկագրով պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) 2014թ-ի սեպտեմբերի 27-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Հաշվի առնելով պատվիրատուի կողմից ծառայությունը մատուցելու համար տրամադրման ենթակա անհրաժեշտ երեսացուի գործվածքի բացակայությունը՝ կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերում կատարել փոփոխություն:

Փոփոխության նկարագրություն: Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերում կատարել փոփոխություն և կարի ծառայության արդյունքում 2014թ. սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին մատակարարման ենթակա 2000 լրակազմ «Կոստյում՝ բամբակյա, կեպիով» ապրանքատեսակի քանակներից 500 լրակազմի մատակարարումը թողնել հոկտեմբեր ամսին, 200 լրակազմի մատակարարումը նախատեսել նոյեմբեր ամսին, իսկ մնացած 1300 լրակազմը՝ դեկտեմբեր ամսին, բայց ոչ ուշ, քան 20.12.2014թ: Վճարումը կիրականցվի վերը նշված համապատասխան ամիսներին՝ աճողական կարգով, բայց ոչ ուշ, քան 25.12.2014թ:

Փոփոխության հիմնավորում: Սույն փոփոխություն կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 7.2 կետը: Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 10.02.2011թ. № 168-Ն որոշման 71-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին: Պայմանագրում նման փոփոխություն կատարվում է առաջին անգամ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ՏՎ և ԳՓՁ վարչության գլխավոր մասնագետ Ռ. Մարդոյանին:

Հեռախոս՝ <u>010-29-44-99:</u>

Էլ. փոստ՝ r.mardoyan@mil.am:

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն: